



Հ Ի Մ Ն Ո Ւ Ա Մ  
1918 Ի Ն

# ԺՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի

(Հայ Մաւրմաւկերբական Ընդհանուր Միութիւն)



Հ. Մ. Ը. Մ. Ի Եգիպտոսի Նըզան

1929



Հ Ի Մ Ն Ո Ւ Ա Մ  
1918 Ի Ն

# ԺՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի

(Հայ Մարմնակերպական Ընդհանուր Միութիւն)



Հ. Մ. Ը. Մ. Ի Եզիպոսի Շրջան

1929



## ՄՐԱԳՐԻՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՌԻՅՈՎ

Հ. Մ. Ը. Մ. հիմնուած է համաշխարհային պատերազմի զինադադարին յաջորդ օրն իսկ, 1918 Նոյեմբերին, Կ. Պոլսոյ մէջ:

Հիմնադիրները նպատակ ունեցած են ի մի ձուլել նախկին բոլոր մարզական ակումբները եւ միակ ծրագրով ընդ առաջ երթալ ազգային վերականգնումի գործին, միեւնոյն ասեմն՝ շարժումը սարածել ամբողջ հայութեան մէջ:

Մարզականին հետ ձեռք առնուած է նաեւ Սկսումսական շարժումը՝ որ նոր է աշխարհի համար, զոր մտադրած են սարածել հայութեան բոլոր հասուածներու եւ խաւերու պատկանող պատանիներուն մէջ:

Հոս շեմք ուզեր պատմականը ընել գործին, միայն կ'ուզենք շեշտել որ՝ Միութիւնը իր վրայ առած է բաւական ծանր եւ պատասխանատու գեր մը՝ որուն յաջողութեան համար ոչ մէկ գոհողութիւն չպիտի խնայէ, հաւատացած ըլլալով որ՝ իր ԳՈՐԾԸ՝ ազգային ֆիզիկական-բարոյական տեսակետով՝ ամենակենսական եւ հիմնական ձեռնարկներէն է:

19 Յունիս 1921 Կ. Պոլիս

Հ. Մ. Ը. Մ.

Հանդիսառ սակարներուն նահատակիդ՝ և  
 յարգանք Տեառականիդ՝ որ իրականացած է:  
 Հ. Մ. Ը. Մ.



ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆ + 1906 ԻՆ

«ԵՐԿՈՒ ԴՈՐ ՈՒԺԵՐ

(Հայ Մարմն. Ընդհ. Միութիւն և Հայ Սկսուցներ)  
 «... ու այժմ ժամանակ է որ գործը աւելի ազ-  
 գային և տեսական հիմներու վրայ դնելու հա-  
 մար՝ կազմակերպուինք իբր Հայ Մարմն. Ընդհ.  
 Միութիւն ... »:

Շ. Ք.

«ՄԱՐՄՆԱՄԱՐՁ», 1913 ԱՊՐԻԼ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԷՁ 61—62

# ԺՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի

(ՀԱՅ ՄԱՐՄԵՆԱԿՐԹՈՒԿՈՒՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻԻՆ)

## Ն Պ Ա Տ Ա Կ

ՅՕԳ. 1. — Հ. Մ. Ը. Մ. Ի նպատակն է ֆիզիքական առողջ դաստիարակութիւն մը տալով պատանիին՝ սատարել ցեղին բարոյական եւ իմացական բարձրացման: Սորվեցնել անոր՝ ըլլալ չարքաշ եւ ժուժկալ, կարգապահ եւ օրինապահ, արթուն, արագ եւ ճիշտ դատող, ձեռներէց, կորովի, արի եւ հայրենասէր՝ զարգացնելով անհատին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի զգացումները, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի:

## Մ Ի Ջ Ո Ց Ն Ե Ր

ՅՕԳ. 2. — Հ. Մ. Ը. Մ. Ը իր նպատակը իրագործելու համար ի գործ կը դնէ հետեւեալ միջոցները.

Ա. Սկաուտական կրթութիւն՝ կազմելով  
Սկաուտներու եւ ԿԱՅՏերու խումբեր՝ իրենց  
յարակից դասերով (Գայլիկներ, Երէջներ, Եւլն.):

Բ. Շուէտական մարզանք՝ իր նորագոյն  
մէթոտներով:

Գ. Աթլէթիք եւ դաշտային խաղեր (Ֆուտ-  
պօլ, Պասկէտպօլ, Թէնիս, Եւայլն), Որսորդա-  
կան-արշաւներ, Ծովային մարզանքներ, Եւայլն):

Դ. Գասախօսութիւններ:

Ե. Հրատարակութիւն հանդէսներու, գրք-  
քոյկներու, գիրքերու՝ Միութեան նպատակին  
հետ սերտ առնչութիւն ունեցող նիւթերու  
վրայ:

Զ. Մատենաստդարաններ՝ օժտուած Միու-  
թեան առաջադրած նպատակին իրագործման  
ծառայող գիրքերով:

Է. Հաւաքավայրեր եւ մարզարաններ:

## Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

307. 3. — Հ. Մ. Ը. Մ. ի կրնայ անդամակ-  
ցիլ ԵՅԹԸ տարեկանը լրացնող ամէն հայ:

307. 4. — Միութեան անդամակցիլ փա-  
փաքող մը պարտի դիմել իր Թաղին՝ Մասնա-  
ճիւղին՝ ստորագրելով «Անդամակցութեան Ա.  
նաջարկ» մը (Տե՛ս էջ 22 Թիւ 1). Մասնաճիւ-  
ղային վարչութիւնը պարտաւոր է մինչեւ 15

օր յայտնել իր որոշումը: Ընդունուած անդամի մը դէմ հեղբոնական վարչութեան կողմէ ըլլալիք ոեւէ դիտողութիւն եւ որոշում պէտք է նկատի առնուի եւ տառապէս գործադրուի մասնաճիւղային վարչութեան կողմէ:

ՅՕԳ. 5. — Կեղբոնական վարչութիւնը անդամի մը մասին ոեւէ առարկութիւն չունենալու պարագային կը զրկէ «Ինքնութեան ճոմս»ը:

ՅՕԳ. 6. — Միութեան անդամները կ'ըլլան.

Ա. Գործօն,

Բ. Համակիր:

ՅՕԳ. 7. — Գործօն կը նկատուին եօթը տարեկանէն սկսեալ մինչեւ ԳՍԱՆ տարեկանը լրացնողները:

ՅՕԳ. 8. — Եօթնէն ՏԱՍՆԵՐԿՈՒ տարեկանները պարտին հետեւիլ սկաուտական նախապատրաստական ճիւղին:

ՅՕԳ. 9. — ՏԱՍՆԵՐԿՈՒ տարեկանէն մինչեւ ՏԱՍՆԸՎԵՑ տարեկան, պարսաւոր են մնալ սկաուտական շարքերու մէջ:

ՅՕԳ. 10. — ՏԱՍՆԸՎԵՑ տարեկանը լրացնելէ վերջ, Միութեան անդամակցողները սկաուտական շարքերու մէջ չեն ընդունուիր, եւ սակայն պարսաւոր են մինչեւ ԳՍԱՆ տարե.

կանը լրացնելը, հետեւիլ ոեւէ մարզական  
ձիւղի:

ՅՕԴ. 11. — շամակիր կը նկատուին ՔՍԱՆ  
տարեկանէն վեր եղողները. իսկ անոնք որ,  
ոեւէ կերպով կը շարունակեն աշխատիլ Մաս-  
նաճիւղերու ներքին կեանքին մէջ, կը պահեն  
«գործօն»ի հանգամանքը:

## ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ

ՅՕԴ. 12. — «Բարերար» անդամ կը հռչակ-  
ուին անդամ կամ ոչ-անդամ այն անհատները՝  
որոնք նիւթական կարեւոր նուիրատուութիւն  
մը կ'ընեն Միութեան:

ՅՕԴ. 13. — «Պատուակալ Անդամ» կը հռչ-  
ակուին անդամ կամ ոչ-անդամ այն անհատ-  
ները՝ որոնք գնահատելի ծառայութիւն մը կը  
մատուցանեն Միութեան:

ՅՕԴ. 14. — Բարերար կամ Պատուակալ  
հռչակուելու առաջարկ մը պէտք է գայ Մաս-  
նաճիւղային վարչութեան մը կողմէ, որմէ  
վերջ ճիշտնի վարչութիւնը հաւանութիւն տա-  
լու պարագային, կը տեղեկացնէ կեդրոնական  
վարչութեան, ստանալու համար հռչակումի  
պաշտօնաթուղթը:

ՅՕԴ. 15. — կեդրոնական վարչութիւնը  
կրնայ ինքն-ալ իր յարմար դատած մէկ ան-



ծր, ուղղակի բարերար կամ Պատուակալ ան-  
դամ հռչակել:

## Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր

307. 16. — Մասնաձիւղի մը կազմութեան  
համար անհրաժեշտ են առնուազն ՔՍԱՆ հոգի:

307. 17. — Նուազագոյն յոթ հոգի, կըր-  
նան դիմել իրենց մօտ եղող շրջանի վարչու-  
թեան եւ անոր կողմէ ցոյց տրուելիք: Մասնա-  
ձիւղի մը հետ կապ հաստատել: Այս յոթ հո-  
գիները իրենց մէջէն կ'ընտրեն երեք հոգիէ  
բաղկացած «Առժամեայ վարչութիւն» մը, որ  
ինքնագլուխ չէ, այլ իր սլատկանած Մասնա-  
ձիւղային վարչութեան հրահանգներով կը  
ղեկավարուի, մինչեւ որ անդամներու թիւը  
հասնի ՔՍԱՆի, որմէ լետոյ իբր առանձին վար-  
չութիւն կը վաւերացուի եթէ ՅԱՐՄԱՐ ՏԵՍ-  
ՆՈՒԻ:

307. 18. — Մասնաձիւղերը ունին երկու  
ժողով.

Ա. Մասնաձիւղային ընդհանուր ժողով.

Բ. Մասնաձիւղային վարչական ժողով:

## Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ը Ն Դ Շ Ժ Ո Ղ Ո Վ

307. 19. — Մասնաձիւղային ընդհ. ժողով-  
ներու կը մասնակցին բոլոր անդամները, բա-

ցի պատուակալ, բարերար եւ ՏԱՍՆԵՐԿՈՒ տա-  
րեկանը չը լրացնող անդամներէ:

ՅՕԴ. 20. — ՏԱՍՆԵՐԿՈՒՔէն ՏԱՍՆԸՇԻՆԳ տա-  
տարեկանները կը մասնակցին ընդհ. ժողով-  
ներու, առանց քուէի իրաւունքի:

ՅՕԴ. 21. — ԵՅԹՆէն ՏԱՍՆԵՐԿՈՒ տարեկան-  
ները իրենց առաջարկները կամ դիտողու-  
թիւնները կը ներկայացնեն ընդհանուր ժողո-  
վին իրենց խմբապետին, իոխ խմբապետին  
կամ խմբակի առաջնորդներու ներկայացու-  
ցիչին միջոցաւ:

ՅՕԴ. 22. — Մասնաճիւղային ընդհ. ժողովը  
կը ղեկավարուի առժամեայ դիւանով մը:

ՅՕԴ. 23. — Մասնաճիւղային ընդհ. ժողո-  
վին պաշտօնն է, լսել վարչութեանց համա-  
րատուութիւնը եւ հաշուետուութիւնը, ընտ-  
րել նոր վարչութիւնը, լուծել օրակարգի վը-  
րայ գտնուած խնդիրները, ընտրել շրջանա-  
յին ընդհ. ժողովին համար պատգամաւորներ:

ՅՕԴ. 24. Մասնաճիւղային ընդհ. ժողովնե-  
րը կը գումարուին տարին մէկ անգամ. (Տես  
էջ 22 Թիւ 2). բացառիկ ժողովներ ալ կրնան  
գումարուիլ.

Ա. երբ Մասնաճիւղային վարչութիւնը  
հարկ տեսնէ,

Բ. Երբ քուէի իրաւունք ունեցող անդամներու Մէկ ԵՐՐՈՐԴԸ գրաւոր պատճառաբանութեամբ կը պահանջէ:

ՅՕԴ. 25. — Մասնաձիւղային ընդհ. ժողով. ներու ներկայ եղողներու ոեւէ թիւ մեծամասնութիւն կը նկատուի, պայմանաւ որ գումարումէն առնուազն երեք օր առաջ հրաւէր ըլլայ տեղական թերթերու միջոցաւ, եթէ կան, եւ կամ մասնաւոր նամակով:

## ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 26. — Վարչութիւնը կը բաղկանայ եօթը հոգիէ, որոնք կ'ըլլան Ատենապետ, Ատենադպիր, Գանձապետ, Համարակար, Գոյքապահ (ասոնք կը կոչուին ՎԱՐՉԱԿԱՆ Անդամներ). Սկաուտ եւ Շուէտականի խմբապետ, Աւելիւթիկ եւ Ֆուտպօլի խմբապետ (ասոնք կը կոչուին ՄԱՐԶԱԿԱՆ Անդամներ):

ԾԱՆՕԹ. — Մասնաձիւղերու Վարչութեան ընտրելի անդամները, պէտք է 18 տարեկանը լրացուցած ըլլան:

ՅՕԴ. 27. — Վարչութեան մը վարչական անդամներէն մէկ կամ երկուքին հրաժարման պարագային, տեղը նորեր կ'առնուին ընդհ. ժողովին մէջ Վարչութեան ընտրութեան առթիւ առաւելագոյն քուէ շահողներէն: Իսկ

մեծամասնութեան հրաժարելու պարագային  
նոր ընտրութիւն կը կատարուի:

ՅՕԴ. 28. — Վարչութիւնը կը պաշտօնա-  
վարէ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՏԱՐԷ:

ՅՕԴ. 29. -- Վարչութիւնը ընտրուելէ վերջ  
կը վաւերացուի Շրջանի վարչութենէն:

ՅՕԴ. 30. — Եթէ Մասնաճիւղի մը մէջ գրա-  
նուին մէկէ աւելի սկստուտական խումբեր եւ  
անոնց վարիչները ունենան հաւասար աստի-  
ճաններ, անոնք կ'ընտրեն լիազօր աւագ վա-  
րիչ մը, որ պէտք է մաս կազմէ վարչութեան  
իբր սկսուտ եւ շուէտականի խմբապետ:

ՅՕԴ. 31. — Մասնաճիւղային վարչութիւն-  
ները պարտաւոր են ամէս ամսոյ վերջ իրենց  
տեղեկագիրը դրկել Շրջանի վարչութեան:

ՅՕԴ. 32. — Մասնաճիւղային վարչութիւնք  
պէտք է ջանան Շ. Մ. Ը. Մ. Ի առաջադրած  
նպատակը իրագործելու համար ցոյց տրուած  
միջոցները հաւասարապէս գործադրել:

ԾԱՆՕԹ. — Կեդրոնական վարչութեան, Կեդրոնի  
Յանձնախումբերու եւ Շրջանային վարչութեան անդամները՝  
մասնաճիւղերու մէջ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՕՆ չեն կրնար  
ստանձնել:

## Շ Ր Ջ Ա Ն Ն Ե Ր

ՅՕԴ. 33. — Երբ երկրի մը կամ քաղաքի մը  
մէջ մէկէ աւելի մասնաճիւղեր գտնուին, Կեդ-

րոնական վարչութիւնը կրնայ անոնցմէ կազմել շրջան մը:

ՅՕԴ. 34. — Շրջան մը կ'ունենայ երկու ժողով.

Ա. Շրջանային ընդհանուր ժողով.

Բ. Շրջանային վարչական ժողով:

### ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 35. — Շրջանային ընդհ. ժողովը կը գումարուի տարին մէկ անգամ, Յունուար ամսուան մէջ, շրջանը կազմող Մասնաճիւղերու ընդհ. ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներով:

ՅՕԴ. 36. — Շրջանային ընդհ. ժողովի տեղը, օրը եւ ժամը կը ծանուցուի Շրջանային վարչութեան կողմէ գումարումէն ամիս մ'առաջ: (Տե ս էջ 22 Թիւ 3): Շրջանի մը կազմութեան յաջորդող առաջին Շրջանային ընդհ. ժողովին հրաւերը կ'ըլլայ Կեդր. վարչութեան կողմէ:

ՅՕԴ. 37. — Բացառիկ Շրջանային ընդհ. ժողովներ կը գումարուին եթէ այդ շրջանը կազմող Մասնաճիւղերու պատգամաւորներու Մէկ եՐՐՈՐԴԸ պահանջէ:

ՅՕԴ. 38. — Մասնաճիւղերը իրենց պատգամաւորները կ'ընտրեն հետեւեալ հիման վրայ.

Ա. Նուազագոյն ԲՍԱՆ անդամի համար մէկ պատգամաւոր:

Բ. Քսանէն վեր իւրաքանչիւր ՅԻՍՈՒՆ անդամի համար մէկ պատգամաւոր:

ՅՕԴ. 39. — Մասնաճիւղերը կրնան իրենց պատգամաւորները ընտրել ուրիշ մասնաճիւղերու պատկանող անդամներէն ալ:

ՅՕԴ. 40. — Շրջանային ընդհ. ժողովի պաշտօնն է.

Ա. Քննել իրեն ենթակայ մասնաճիւղերու տարեկան գործունէութեան տեղեկագիրները՝ գորս պատգամաւորները պարտին ներկայացնել:

Բ. Ընտրել շրջանային վարչութիւնը:

Գ. Ընտրել ընդհ. Պատգամաւորական ժողովին համար պատգամաւորներ:

ՅՕԴ. 41. — Շրջանային ընդհ. ժողովները իրենց պատգամաւորները կ'ընտրեն հետեւեալ հիման վրայ:

Մէկէն մինչեւ եօթը պատգամաւոր ունեցող շրջանները մէկ պատգամաւոր՝ իսկ անկէ վեր իւրաքանչիւր հինգ պատգամաւորի փոխարէն մէկ պատգամաւոր:

Օրինակ, շրջանային ընդհ. ժողովին մէջ 17 պատգամաւոր ունեցող շրջան մը՝ կ'ընտ-

րէ 3 պատգամաւոր ընդհ. Պատգամաւորա-  
կան ժողովին համար:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 42. — Շրջանային վարչութեան պաշ-  
տօնը կը տեւէ մէկ տարի:

ՅՕԴ. 43. — Շրջանային վարչութիւնը կը  
բաղկանայ 7 հոգիէ, որոնց երկուքը կ'ըլլան  
մարզակական եւ սկաուտ մասնագէտներ: Ա-  
սոնք կը մասնակցին 45րդ յօդուածի համաձայն  
կազմելի յանձնախումբերու:

ՅՕԴ. 44. — Շրջանային վարչութիւնը կըր-  
նայ, եթէ պէտք տեսնէ, կազմել յանձնախումբեր  
սկաուտական եւ դաշտային խաղերու համար:

ՅՕԴ. 45. — Շրջանային վարչութիւնը ա-  
մէն ամիս իր իսկ գործունէութեան մէկ տե-  
ղեկագիրը, ինչպէս նաեւ 32րդ յօդուածի հա-  
մաձայն իրեն ենթակայ Մասնագիւղային վար-  
չութիւններէ գալիք ամսական տեղեկագիր-  
ներու մէկ ամփոփումը կը դրկէ հեղրոնական  
վարչութեան:

ՅՕԴ. 46. — Շրջանային վարչութիւնը կըր-  
նայ նշանակել քննիչներ շրջանին վերաբեր-  
եալ գործերու մասին ամէն տեսակի քննու-  
թիւն կատարելու պաշտօնով:

Քննիչները կրնան մասնակցիլ խորհրդակցական ձայնով Մասնաճիւղային ընդհ. ժողովներու:

ՅՕԴ. 47. — Շրջանի մը մաս չկազմող Մասնաճիւղերը ուղղակի կեդրոնական վարչութեան հետ կապ կը պահեն եւ անոր պատասխանատու են:

## ՎԵՐԻՆ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՆԵՐ

ՅՕԴ. 48. — Հ. Մ. Ը. Մ.ի վերին երկու ժողովներն են.

Ա. ընդհանուր Պատգամաւորական ժողով:

Բ. կեդրոնական վարչական ժողով:

ՅՕԴ. 49. — Ընդհանուր Պատգամաւորական ժողովը կը գումարուի երեք տարին անգամ մը շրջանային ընդհ. ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներով, յարմարագոյն վայր մը կ'որոշուի կեդրոնական վարչութեան կողմէ.

ՅՕԴ. 50. — Ընդհ. Պատգ. ժողովոյ պաշտօնն է:

Ա. Քննել շրջաններէ եկած տեղեկագիրները:

Բ. Ընտրել կեդրոնական վարչական ժողովը:



Գ. Որոշել Միուկեան ընդհանուր ուղե-  
գիծը:

Դ. Քննել եւ վաւերացնել, ի հարկին  
Միուկեան ընդհանուր ելմտացոյցը:

Ե. Ընտրել մնայուն հաշուեքննիչ մար-  
մին մը երեք հոգիէ բաղկացեալ:

ՅՊԳ. 51. — Բացառիկ ընդհ. Պատգամաւո-  
րական ժողովներ կրնան գումարուիլ:

Ա. Եթէ կեդրոնական վարչական ժո-  
ղովը պէտք տեսնէ:

Բ. Եւ կամ պատգամաւորներու Մէկ եր-  
րորդը պահանջէ:

ՅՊԳ. 52. — Ընդհ. Պատգամաւորական  
ժողովոյ անդամներու պաշտօնը կը տեւէ երեք  
տարի:

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅՊԳ. 53. — կեդրոնական վարչական ժո-  
ղովը կ'ընտրուի ընդհանուր Պատգ. ժողովէն  
եւ կը բաղկանայ ԵՅԹԸ անդամէ եւ ԶՈՐՍ փո-  
խանդամէ. այս վերջինները ժողովներու կը  
մասնակցին խորհրդակցական ձայնով:

ՅՊԳ. 54. — Եթէ կեդր. վարչական ժողո-  
վը իր մեծամասնութիւնը կորսնցնէ, ընդհ. Պատ-  
գամաւորական ժողովը կ'ընտրէ նոր վարչ.  
ժողով մը:

ՅՕԳ. 55. — Եթէ կեդր. վարչական ժողովի անդամներէն մին հրաժարի, փոխանդամներէն առաւելագոյն քուէ շահողը անոր կը յաջորդէ:

ՅՕԳ. 56. — կեդր. վարչական ժողովի դիւանը կը բաղկանայ մէկ ատենապետէ եւ մէկ ատենադպիրէ:

ՅՕԳ. 57. — կեդր. վարչական ժողովի անդամները կ'ընտրուին ՔՍԱՆԸՄԷԿ տարեկանը լրացնող գործօն եւ համակիր անդամներէն:

ՅՕԳ. 58. — կեդր. վարչական ժողովը իրեն օժանդակ պէտք է առնէ հետեւեալ յանձնախումբերը.

Ա. Սկառուտական,

Բ. Մարզական, (Շուէտական, Գուտպօլ, Աթլէթիք).

Գ. Փրոփականտ (մամուլ, դասախօսութիւն եւ այլն):

ՅՕԳ. 59. — վերոյիշեալ յանձնախումբերէն զատ կեդր. վարչ. ժողովը կրնայ իր անհրաժեշտ նկատած յանձնախումբերը ընտրել:

ՅՕԳ. 60. — կեդր. վարչական ժողովի պաշտօնն է.

Ա. Գործադրել Միուկեան ծրագիրը.

Բ. Միուկեան բոլոր գործերուն վերին հսկողութիւնը կատարել.

Գ. Պատրաստել իր ելմտացոյցը եւ ներկայացնել ընդհ. Պատգ. ժողովին.

Գ. Մանօթացնել հայուժեան բոլոր մասերուն եւ խաւերուն Շ. Մ. Ը. Մ.ը եւ տարածել զայն: Կեդր. Վարչ. պաշտօնը կը տեւէ երեք տարի:

## Պ Ի Ի Տ Ճ Է

ՅՕԳ. 61. — Կեդրոնական Վարչական ժողովի պիւտճէն ապահովող միջոցներն են.

Ա. Ընդհանուր Ողիմպիական Մրցումներ.

Բ. Վիճակահանութիւններ.

Գ. Զանազան հանդէսներ (մարզական, թատերական եւ երաժշտական).

Դ. Յուցահանդէսներ եւ պազար (սկաններու կողմէ շինուած առարկաներու).

Ե. Վաճառում Միութեան կողմէ հրատարակուած գրքերու եւ գրքոյքներու.

Զ. Նուիրատուութիւններ եւ հանգանակութիւն.

Է. Երջանին եւ Մասնաճիւղին զրկելիք Գումարը (63րդ յօդուածին համաձայն):

ՅՕԳ. 62. — Մասնաճիւղերը պարտին իրենց հասոյթներուն 30%ը զրկել այն շրջանին վարչութեան որուն մաս կը կազմեն (տես էջ 23 թիւ 4):

ՅՕԳ. 63. — Շրջանի մը մաս չկազմող փաս-  
նաճիւղերը վերոյիշեալ 30%ը պարտին զրկել  
ուղղակի կեդր. վարչութեան:

ՅՕԳ. 64 — Շրջանային վարչութիւնք ի-  
րենց փասնաճիւղերէն ստանալիք 30 առ հա-  
րիւրէն 10 առ հարիւրը միայն իրենց համար  
վար դնելով՝ 20%ը պարտին զրկել կեդրոնա-  
կան վարչութեան:

ՅՕԳ. 65. — Շրջանային վարչութիւններու  
նախաձեռնութեամբ գոյացած ամէն հասոյթի  
30%ը նոյնպէս պէտք է զրկուի կեդր. վար-  
չական ժողովին:

## ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՅՕԳ. 66. — Միութիւնը պէտք է ջանայ.

Ա. նիւթական միջոցներ տրամադրել  
Միութեան անդամներէն պատրաստելու հա-  
մար մասնագէտներ՝ սկաուտական եւ մարզա-  
կան ճիւղերու:

Բ. Միջազգային Ողիմպիական մրցու-  
մներուն մասնակցութեան: Սոյն մրցումնե-  
րուն զրկուելիք մարզիկները կ'առնուին  
Հայ. Ընդհ. Ողիմպիական մրցումներու մէջ  
համաշխարհային մրցանիշներու մօտ նիշ ու-  
նեցող իր անդամներէն, որոնց մէջէն յաջո-

դագոյնները կ'որոշուին՝ Միջազգային Ողիմպիական Մրցումներու Թուականէն երկու ամիս առաջ՝ կեդրոնական վարչական ժողովէն նշանակուած դատաւորներու ներկայութեան տեղի ունենալիք մասնակի մրցումէն:

Գ. Ունենալ զանազան երկիրներու մէջ գումարուող Միջազգային Սկաուտական եւ Մարմնակրթական Համաժողովներու մէջ ներկայացուցիչ:

1921 Յունիս 19

Հ. Մ. Ը. Մ.

Կ. Պոլիս ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

## ՅԱԻԵԼՈՒԱԾՆԵՐ(\*)

---

1. — (ՅՕԴ. 4). որուն պարտի կցել՝ 3 լայնք եւ 4 սանթիմետր երկայնք ծաւալով՝ երեք օրինակ իր դէմքին (առանց գլխարկի, եւ Յակտէն առնուած) լուսանկարէն հազիւ մինչ եւ ուսերով:

2. — (ՅՕԴ. 24.), դեկտեմբեր ամսոյ առաջին մասին մէջ, որպէսզի՝ մինչ եւ Շրջանային ընդհանուր ժողովի գումարումը՝ պատգամաւորներ ատեն ունենան պէտք եղած ուսումնասիրութիւնները ընելու:

3. — (ՅՕԴ. 36.) Պատգամաւորներու տեղափոխութիւնը բաւականի մեծածախս, հետեւապէս՝ անհատաբար ծանրաբեռնուելին անարդար նկատեց 23 Յուլիս 1929ին գումարւած Շրջ. ընդհանուր ժողովը, եւ որոշեց՝ Ա. Նր.

---

(\*) Այս բաժինին մէջ, արձանագրուած են՝ առժամեայ հանգամանքով, Եգիպտոսի շրջանին մէջ գործադրութիւնը անհրաժեշտ նկատուած այդ օրէնքներն՝ որոնք (յետ քննութեան վաւերացման համար պիտի ներկայացուին գումարելի ԱՌԱՋԻՆ Հ. Մ. Ը. Մ. Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՎԻՆ:

ւազագոյն թուով պատգամաւորներ փոխա-  
դրել, հիմ ունենալով ընտրել ժողովապայրը: Բ.  
տեղափոխուողներուն սիայն *հրթեւեկի նուա-  
զագոյն ծախքը, եւ համեստ իջեւանի մը գի-  
շերային վարձքը* վճարել: Գոյանալիք ընդհանուր  
գումարին՝ մէկ չորրորդը շրջ. վարչութեան  
սնտուկէն, իսկ՝ մնացեալը բաժնելով Մասնա-  
ճիւղերու պիւտճէներուն վրայ՝ իւրաքանչիւրը՝  
իր պատգամաւորներու թուին համեմատա-  
կան մասնակցութեամբ:

4. (ՅՕԳ. 62.) Քաղաքական դէպքերու պար-  
տադրումով Հ. Մ. Ը. Մ. կեդր. ի վարչութեան՝  
1922ին՝ ի Պոլիս անակնկալօրէն ցրոււմէն ի  
վեր, դժբախտաբար ցարդ նորը կազմուած  
չըլլալով, հետեւապէս այդ անունով պիւտ-  
ճէի մը անհրաժեշտութիւնն ալ՝ ստիպողական  
չէ: Մինչեւ անոր կազմութիւնը՝ նիւթական  
այդ առաւելութիւնը եգիպտոսի շրջանին մէջ  
յարմար նկատուած է մասնաճիւղերու պիւտ-  
ճէներուն ի նպաստ ձգել, նկատի ունենալով,  
անոնց նոր կազմութեան դժուարութիւններն,  
եւ նմա՞ն նիւթական քաջալերանքի մը բերե-  
լիք բարերար բաժինն:

Որով՝ շրջ. ին վարչութիւնն կը բաւակա-  
նանայ մասնաճիւղերէն գանձելով՝ մտից տուր-

քերու, անդամավճարներու եւ զուտ հասոյթ-  
ներու միայն 10%ը՝

ԱՆԴԱՄԱՎՃԱՐ. Հ. Մ. Ը. Մ. Ի նախընթացը  
այս մասին ըստ Շրջանի նիւթական պայման-  
ներուն տնօրինած ըլլալով, եգիպտոսի Շրջա-  
նըս ցարդ իր անդամներէն կարգադրած է  
գանձել քսան եգիպտ. դրշ, ողջ՝ իբր մուտքի  
տուրք, եւ ամսական տասը դրշ. անդամավը-  
ճար. իսկ ուսանողութենէն՝ միայն տասը դրուշ  
մուտքի տուրք եւ հինգ դրուշ անդամավճար:

Շրջ. վարչութեան հաւանութեամբ միայն՝  
անդամներէն ոմանց վճարման սակին մասին  
բացառիկ կարգադրութիւններ եւս կրնան  
ըլլալ:

Հրաժարած անդամի մը՝ Միութեան կրկին  
կարենալ մաս կազմելը ճշդել՝ ուղղակի Շրջ.  
վարչութեան իրաւասութեան մէջ կ'իյնայ:

27 Սեպտ. 1929

Հ. Մ. Ը. Մ.

Գահիրէ.

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՆՕԹ. — Յաջորդող պարապ էջերուն վրայ կրնան նու-  
թագրուիլ առժամեայ փոփոխութիւնները կամ յաւելուածները  
որոնք պիտի հրահանգուին Կեդր. վարչութեան կամ Շրջ.  
վարչութեան կողմէ:



Արքաւորհ շայրեր Կրօնի. ցեղր կերտող  
 գոհաբեր Դասխարակներ եւ Առաջնորդներ  
 Մսի եւ մանաւանդ բարեխիղն Ծնողք:

Ձեր անդամագրու թեամբ քաջալերեցէք եւ  
 լուսաւորեցէք՝ մեր ճամբան եզրայրութեան եւ  
 աիրոյ, որուն մէջէն՝ ձեր շառաւիղներուն քա-  
 լելն պիտի ըլլայ վաղուան Ձեր հոգեպարար  
 մխիթարանքն:

Հօտն՝ առանց հովիւին հսկող աչքին,  
 նոր սերունդը՝ առանց իր մեծերուն փորձ հո-  
 վանիին, պիտի ըլլար զրկուած մը օրհնու-  
 թիւններէ:

Ուրեմն, արտօնեցէք յուսալ, նորագիր-  
 ներուդ հետ շարունակել վաղը մեր ճամբան  
 պարտքի:


Յարգանքով

ԵԳԻՊՏ. Ի ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻԻՆ

# “HOMENETMEN”

Union Générale Arménienne  
de Culture Physique  
et de Scoutisme

—  
CERCLE D'EGYPTE



---

Imp Artistique 42, Rue de la Jonquière PARIS (17<sup>e</sup>)